

796(062)

81



ԵՐՈՒՍԱՂԷՄ — ՀԱՅՖԱ

ԱՄՍՕՐԵԱՅ ՅՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԹԻԻ 3

ՄԱՐՏ

1938

ԵՐՎԱՆ ԽՕՄԲ

651-4.2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵԴՐՈՆ

Լրիւ քսան տարիներ անցած են արդէն մեզի համար անմոռա. նալի այն թուականէն ի վեր՝ երբ ցեղային կրթութեան հետամուտ եւ ազգային գիտակցութեամբ առկուտ քանի մը անհատներ հիմը դրին Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան, Կ. Պոլսոյ մէջ:


Այս տողերու մէջ նպատակ չունինք փառապատկան հիւսելու հիմնադիրներու ճակտին, եւ ո՛չ ալ պանծացնելու անոնց հիմնադրած եւ հետզհետէ ամենուրեք ճիւղաւորուած այս Միութեան ըստ բաւականի արդիւնաւոր գործունէութիւնը, որոնց պիտի անդրադառնանք յետագային՝ աւելի յարմար առիթներով: Սակայն, առանց ատոր ալ, անհատները - ինչպէս նաեւ հաւաքականութիւնները -

ինքնին փառապատկուած չմըն ըլլար միթէ՛ իրենց իտէալներուն կամ հետապնդած նպատակներուն գործնական արդիւնաւորութեամբն իսկ: Հոս մեր միակ նպատակն է մատնանշել եւ Միութեանս բոլոր մասնաճիւղերուն ուշադրութեան յանձնել այն ցաւալի երեւոյթը, որ մեր միութեանական մեքենային զլխաւորագոյն թիրին եղած է ցարդ:

Հ. Մ. Բ. Մ. ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵԴՐՈՆ ի մը չգոյութեան է որ կ'ակնարկենք:

Դժբախտ բերումներու եւ բացատրութեան անկարօտ պատճառներու հետեւանցով Կ. Պոլսոյ կեդրոնական Մասնաճիւղին քայքայումէն ի վեր Հ. Մ. Բ. Մ. ը չէ ունեցած իր Ընդհանուր կեդրոնը:

1 OCT 2010



471-57 013

2000

թէ և չեն պակասած այս անգանցառելի երեւոյթը մատնանշող և անոր դարմանման հետամտող անհատներ, և սակայն այդպիսիներուն ձայնը միշտ ալ անարձագանգ մնացած է ընդհանուրին վերապահ կամ անտարբեր կեցուածքին առջեւ:

Ինչո՞վ կրնանք արդարացնել Հ.Մ.Ր.Մ.ի ապակեղրոն այս վիճակը: Ո՛րեւէ ծաւալուն միութիւն, ինչպէս է համագաղութային մեր եղբայրութիւնը, կարո՞ղ է անսայթաք ընթանալ իր պարտականութեանց ճամբուն վրայ, առանց ընդհանուր ղեկավարութեան մը ուղղամիտ առաջնորդութեան: Եւ թէ՛ ներկայիս անհրաժեշտութիւն մը չէ՞ արդեօք այդ ուղղութեամբ ընդհանուր և լուրջ անդրադարձում մը: Հարցում՝ որ չի կրնար երկու պատասխան ունենալ:

Հ.Մ.Ր.Մ.ը պէ՛տք է ունենայ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵԴՐՈՆ մը: Կեղրոն մը՝ որ ո՛չ միայն ազդակ մը ըլլայ բոլոր մասնաճիւղերու եղբայրական համագործակցութեան, այլ և ուղեցոյցն ու վարիչն ըլլայ Միութեանս նպատակներուն անթերի և միանուագ իրագործման:

Այս առաջարկը, որ կը բղխի անտարակոյս իւրաքանչիւր գիտակից Հ.Մ.Ր.Մ.ականի սրտէն, ան-

յետաձգելիօրէն պէ՛տք է գտնէ իր գոհացումը՝ բոլոր մասնաճիւղերու համաձայնութեամբ և միահամուռ գործակցութեամբ:

Երջանային Վարչութիւնները, որոնցմով կը ղեկավարուին ներկայիս իւրաքանչիւր երկրի մէջ գոյութիւն ունեցող մէկէ աւելի մասնաճիւղերը, պէտք է ըլլան կազմուելիք այդ Կեղրոնական Վարչութեան ենթակայ մասնաբաժանումներ:

Իւրաքանչիւր երկիր կամ ԵՐՐ.Ջան, ունենալով տեղական պայմաններուն և միջավայրին յարմարցուած իւրայատուկ կանոնադիր և գործեւկերպ, տեսակ մը անջատ և ինքնամիտ միութեան մը տպաւորութիւնը կը թողու: Ասոնց փոխարարներութիւններն ալ չափազանց թոյլ են և պատահական: Այնպէս որ նուազագոյն ծանօթութիւնն իսկ չունինք շատ մը երկիրներու մէջ գոյութիւն ունեցող մասնաճիւղերու կեանքին ու գործունէութեանց շուրջ:

Պէտք է շեշտել նաև, որ շատ մը մասնաճիւղեր, ինչպէս Ամերիկայի մէջ եղածները, Հ.Մ.Ր.Մ.ի լոկ անուանական պիտակը կը կրեն իրենց վրայ և հետո ևն ծառայելէ անոր ազգանուէր նպա-

տակներուն: Յիշենք վերջապէս, որ Պուլկարիոյ մէջ գոյութիւն ունին Հ.Մ.Բ.Մ.ի երկու ճիւղաւորումներ, իրարմէ անջատ և նոյնիսկ ներհակ իրարու... Անըմբռնելի կացութիւն արդարեւ:

Բոլոր մասնաճիւղերն ալ, քիչ բացառութեամբ, անտարակոյս ունեցած են շեղումներ՝ աւելի կամ նուազ չափերով (յաճախ ստիպողական պայմաններու տակ), սակայն ընդհանուր պատկերը, իր ներկայ վիճակին մէջ իսկ, հեռու է յուսահատական ըլլալէ:

Հ.Մ.Բ.Մ. Ը, ըլլալով երիտասարդ և պիտանի տարրերու ֆիզիքական և բարոյական դաստիարակը, պէ՛տք է հասնի իր անունին և կոչումին վայել բարձրութեան մը, որպէսզի կրննայ աւելի անվերապահ նուիրումով ծառայել իր ցեղին բարձրացման ազնուացման:

Անխտիր բոլոր մասնաճիւղերը, վերաքննութեան ենթարկելէ յետոյ իրենց ներկայ գործունէութիւնը, գիտակցօրէն և բացարձակ լայնամտութեամբ պէտք է մօտենան խնդրին:

Ամենուրեք պէտք է հաստատուն միջ-մասնաճիւղային բարեոք յարաբերութիւններ և ստեղծունի կարելիութիւններ՝ Միութեանս նը-

պատակները անշեղ և միանուագ իրագործելու համար:

Բայց նախ քան այդ, ինչպէս շեշտեցինք վերեւ, պէտք է հաստատուի ընդհանուր կեդրոն մը, ինչ որ միակ և անհրաժեշտ պայմանն է ցանկացուած համակեդրոնացումը իրականացնելու և հարկ եղած բարեկարգութեանց ձեռնարկելու համար:

*
*
*

Ինչպէս տեղեկացուցած էինք արդէն նախորդով, անցեալ ամիս Փարիզէն ստացանք պաշտօնական գրութիւն մը, ըստ որում՝ Միութեանս հիմնադիր անդամներուն նախաձեռնութեամբն իսկ ձեռնարկուած է կազմել Ֆանձնախումբ մը - բաղկացած բոլոր մասնաճիւղերուն ներկայացուցիչներէն(*) - որուն պարտականութիւնը պիտի ըլլայ ստեղծել միջոցներ և կարելիութիւններ՝ յառաջիկայ նոյնամբերին պատշաճ հանդիսատէութեամբ մը ամենուրեք տօնակատարելու համար Հ.Մ.Բ.Մ.ի հիմնարկութեան քսանամեակը:

(*) Պաղեստինի դոյզ մասնաճիւղերը նշանակած են արդէն իրենց ներկայացուցիչները: Երուսաղէմէն՝ Եղբայր Վահան Ղաղարեան (Մասնաճիւղիս Վարչութեան Ատենապետը), իսկ Նայֆայէն՝ Կղբայր Եղիշէ Մանուկեան (Ատենապետը Նայֆայի Մասնաճիւղի Վարչութեան):

Ուրախառիթ ձեռնարկ, որ ար-
ժանի է ամէն զնահատանքի եւ
քաջալերութեան ո՛չ միայն որով-
հետեւ ան երաշխիք մը կուտայ
մեզի յիշեալ տօնակատարութեանց
բարեյաջող կատարումին, այլ նաև
անոր համար՝ որ անով նախա-
քայլն իսկ առնուած կ'ըլլայ մեր
մատնանշած եւ անտարակոյս բո-
լորին ալ փափաքը եղող իրեր-
հասկացողութեան եւ համագոր-
ծակցութեան իրականացման ճամ-
բուն վրայ:

Հիմնադիր անդամները, որոնք
դեռ կանգուն սիւներն են այս
Միութեան եւ որոնց ձայնը կը
կարծենք թէ ամենէն հեղինակա-
ւորն ու արծագանգ գտնողն է տա-
կաւին, պէտք է վերստին լծուին

իրենց ստեղծագործած այս մեքե-
նային աշխատանքներուն, այս
անգամ սակայն զայն ամբողջա-
կանացնելու եւ կատարագործելու
վճռականութեամբ: Եւ լիայոյս
ենք թէ անոնց ամէն մէկ քայլը
պիտի հանդիպի բոլորին քաջալե-
րութեան ու գործակցութեան:

Հիմնարկութեան քսանամեակի
յառաջիկայ տօնակատարութիւն-
ները ո՛չ միայն պսակը պէտք է
ըլլան Հ. Մ. Բ. Մ. ի անցեալ ար-
դիւնաւոր գործունէութեան, այլ և
յարմարագոյն առիթը՝ խորհրդա-
ծելու եւ միանգամ ընդմիշտ հար-
թելու այն բոլոր խոչընդոտները,
որոնք արգելք կը հանդիսանան
անոր համակերպունացման եւ ծա-
ւալումին:

*

ԹՄԲՈՒԻՆՔ ՄԻԱՏԵՂ

Յառա՛ջ, մեկը զմեկը դէպի մարգարայր,
Մարմնով ոչ հոգով ըլլա՛նք անկրկուն.
Դըլն՛նք խոչընդոտ, սոչրս՛նք անալլայ,
Լինե՛լ մեր ազգին պահակներն արթուն:

Շոքըքն այս Միոշքեան՝ Հ. Մ. Բ. Մ.,
Եղբայրներ հաւաքն, խմբոշի՛նք միատեղ,
Հո՛նք ոչր կ'անհետի քէն ոչ ոյս սառն,
Հո՛նք ոչր կը կերտոշիս սերունդք փառայեղ:

Կեցցե՛ առ յաշտ մարմնակիրքական
Միոշքիշեր այս հաւնոչր մեր ազգին.
Թող Տի՛, Տաղի՛, շունչով վահագնեան,
Որ տայ Հայ Յեղիս բերքեր քակագին:

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆԱՃԻՂԻՍ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

(1937 ՆՈՅՄԲԵՐ — ՅՈՒՆԻՍԻՐ 1938)

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ.

Վարչութիւնս, որ գործի լըծուեցաւ նոյեմբեր 1 ին, իր պաշտօնական առաջին նիստը գումարեց նոյեմբեր 14 ին, Հայ Կրթ. «Սիոն» Միութեան ակումբին մէջ, լրիւ կազմով: Եզրայր Վահէ Ղազէրեան, որ ի բացակայութեան վարչական ընտրուած էր, իր գործին և ժամանակին անթոյլատու լինելուն պատճառաւ՝ ներկայացուց իր հրաժարականը, որ ընդունուեցաւ: Յաջորդ առաւելագոյն ըուէն ստացող երեք եզրայրեաներէն Յովհ. Պէրպէրեան, միւս երկուքին հրաժարումին վրայ, կոչուեցաւ լրացնելու պակասեալ Վարչութեան կազմը: Անմիջապէս կատարուեցաւ դիւանի ընտրութիւնը՝ ըստ հետեւելին. Եզրարք Վահան Ղազարեան՝ Ա. Ատենապետ, Արամ Այվազեան՝ Փոխ-Ատենապետ, Լեւոն Քէշիշեան՝ Ատենադպիր, Յովհ. Պէրպէրեան՝ Գանձապահ և Կարօ Յակոբեան՝ Խորհրդական:

Եզրարք Թորոս Տէր Թորոսեան և Կարապետ Մարտիրոսեան, որոնցմէ առաջինը՝ եռանուն ցանկի մը վրայէն՝ ընտրուած էր Մարզական

Ընդհանուր Խմբապետ և երկրորդը վերընտրուած Սկաուտապետ, իրենց պաշտօնին բերած իրաւասութիւններով՝ նոյնպէս իրաւասու էին մասնակցելու Վարչական նիստերուն:

Նիստերը գումարուած են շաբաթը անգամ մը կանոնաւորապէս և բոլորին ներկայութեան, տեղի ունեցած են տասներկու օրինաւոր և երկու բացառիկ նիստեր, միշտ եզրայրական մթնոլորտի տակ:

Այս ժամանակաշրջանին՝ Վարչութիւնս վաւերացուցած է 11 անդամակցութեան նոր դիմումնազիւրներ, որոնք ընդունուած են մեր եզրայրութեան մէջ՝ որպէս գործօն անդամներ:

ՄԱՐՁՈՒԹԵԱՆ.

Շնորհիւ նորաւարձ դաշտի ընծայած դիւրութեանց, մեծ զարկ տրուած է մարզական կեանքին, մասնաւորապէս Ֆութպոլի խաղին, որ ունեցած է չորս խումբեր (բացի փոքրերէ կազմուած հինգերորդէն): Վարչութիւնս, աւելի զօրաւոր թափով առաջ տանելու համար Մասնաճիւղի մարզական գոր-

ծունէութիւնը, նշանակեց Մարգարեան Յանձնախումբ մը՝ բաղկացած հետեւեալներէն. Թորոս Տէր Թորոսեան՝ Մարզ, Ընդ. Խմբապետ և մարզիչ յատկապէս Ֆութպոլի, Վահէ Ղազէրեան՝ Մարզ, Ընդհ. փոխ Խմբապետ և մարզիչ Պասկէթպոլի և Աթլէթիզմի, Հրայր Էրկաթեան, Կարօ Յակոբեան և Յովհ. Պէրպէրեան՝ օգնականներ։ Այս Յանձնախումբը եւս գումարած է շարաթական կանոնաւոր նիւտեր։ Անպաստ եղանակի պատճառաւ ներկայիս թէև սահմանափակուեցաւ սոյն Յանձնախումբի գործունէութիւնը, սակայն վստահ ենք թէ մօտալուս զարնան պիտի վերսկսի և անարգել իրականացնէ ան իր վրայ դրուած մեծ յոյսերը։ Այս շրջանին սարքուած են Ֆութպոլի կարգ մը մրցումներ, որոնցմէ մասնաւոր յիշատակութեան արժանի է Հ.Մ.Ը.Մ. Հայֆա և «Կամբ» Եաֆա միացեալ խումբին դէմ կատարուած մըրցումը, որը բարոյական մեծ յաղթանակ մը ապահովեց Հ.Մ.Ը.Մ.ի անուան։ Եզրայր Առաքել Բախի սարեան սոյն մրցումին տրամադրած էր բաժակ մը, որ շահուեցաւ մեր խումբին յաղթանակով։ Տեղի ունեցած ևն նաեւ Պասկէթպոլի և Աթլէթիզմի փորձեր, սա-

կայն ոչ հարկ եղած կանոնաւորութեամբ և յարատեւութեամբ։

ՍԿՍՈՒՏԱՆԱՆ.

Սկաուտական խումբն ալ իր կարգին ունեցած է իւրայատուկ խմբումներ և դասախօսական հաւաքոյթներ, որոնք, պէտք է յիշեւ, դժբախտաբար պէտք եղած կանոնաւորութեամբ և բոլորին մասնակցութեամբ չեն եղած։ Այս շրջանին անոնք պատրաստուած են սկաուտական քննութեանց։

ՁԵՌՆԱՐԳՆԵՐ.

Շատոնց աւարտած էին Հ.Մ.Ը.Մ.ի «Օր»ուան փառաշուք տօնակատարութեան համար հարկ եղած պատրաստութիւնները, և, ինչպէս ազդարարուած էր, տեղի պիտի ունենար Յունուար 30ին, սակայն կամքէ անկախ պատճառներով՝ ստիպուեցանք յետաձգել։ Մօտալուր ապագային անյապաղ պիտի տօնենք զայն Միութեանս Նորա վարձ ընդարձակ ակումբին մէջ։

Վարչութեանս ձեռնարկներուն ամենազլխաւորներէն մին է «Ամսօրեայ Շրջաբերական» ի հրատարակումը, որուն առաջին երկու թիւերը լոյս տեսած են արդէն և զրկուած Մասնաճիւղիս բոլոր անդամներուն, ինչպէս նաեւ Սփիւռքի Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մասնաճիւղերուն և հայ մամուլին

անխտիր: Առաջին թիւը լոյս տեսած է միայն չորս էջերով՝ Ս. Յակոբեանց տպարանին մէջ. սակայն մեր այս անմեղ ձեռնարկը փոխանակ քաջալերութիւն գրտնելու, հանդիպեցաւ վանական իշխանութեան կտորուկ արգելքին: Այս արգելքը բնաւ չյուսահատեցուց մեզ, և, ընդհակառակն, խթան մը եղաւ մեր ճիգերու կրկնապատկումին: Երկրորդ թիւը տպել տուինք Պրանչիսքեան տպարանին մէջ՝ ԿՐԿԻՆ ծաւալով:

Մեր այս ձեռնարկով առաջին հետաքրքրուողը եւ խանդավառուողը եղաւ Հայֆայի Մասնաճիւղը, որու դիմումին վրայ եւ Վարչութեան համաձայնութեամբ՝ «Երջարեական»ը պատկանեցաւ զոյգ մասնաճիւղերուն, հաւասար իրաւունքներով: Եոյն. պէս շատ մը մասնաճիւղերէ ստացած ենք զնահատական եւ քաջալերական տողեր:

Ի՞րագրած ենք հրատարակել նաեւ երեք բացառիկ թիւեր, որոնց առաջին երկուքը պիտի պարունակեն Ֆութպոլի եւ Պասկէթպոլի գլխաւոր օրէնքներն ու այս

խաղերու վերաբերեալ գրութիւններ, իւրաքանչիւրը 16 էջերով. իսկ երրորդը՝ Հ.Մ.Բ.Մ.ի հիմնարկութեան քսանամեակին նուիրուած, 24-32 էջերով:

ԿԱՊԵՐ ԵՒ ՕԺԱՆԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

Վարչութիւնս՝ Հայֆայի Մասնաճիւղի ներկայացուցիչին հետ խորհրդակցարար՝ կատարեց հարկեղած օժանդակութիւնը Ամմանի նորակազմ Մասնաճիւղին բարեկարգման համար: Եոյն. պէս Եւֆայի «Հայկաշէն» Միութեան տրամադրեց Մասնաճիւղիս նուագի եւ պարի խումբերը, Ամանորի առթիւ անոնց կողմէ սարքուած հանդէսին առթիւ:

Այս հոռամտեայ շրջանին Վարչութիւնս յարարեցած է զանազան մասնաճիւղերու և մասնաւորապէս Սիրիոյ, Լիբանանի և Պաղեստինի Երջանային Վարչութեան հետ, փոխանակելով աւելի քան 25 նամակներ:

Ի դիմաց Հ. Մ. Բ. Մ. Ի
Երեսօղէմի Մասնաճիւղի
Վարչութեան

Ատենաղպիբ
Լ. ԲԵՇԻՇԵԱՆ

Ատենապետ
Վ. ՂԱԶԱՐԵԱՆ

Առողջութիւնը պանելը իմաստութեան ձիւնն է:
Հ. Մ. Բ. Մ. ը՛ իբր ուղղումիտ առաջնորդ՝ մտասնութեամբ
քեզ հոն կ'ուղղէ:
Ազնուական հպարտութեամբ մտի՛ր անոր դրօշին տակ:

(Հ. Մ. Բ. Մ. Ի Եգիպտոսի Շրջանի Օրացոյցէն)

ՄԱՐՁԱՆԱՆ

Ֆ Ո Ւ Թ Պ Ո Ղ

Փետրուար 20 ին Հ.Մ.Բ.Մ. ի Երուսաղէմի խումբը չարաչար պարտուեցաւ անգլիական Force H. G. խումբէն: Նոյն ամսոյ 6 ին R.A.F. ի զէմ տարած իր փառաւոր յաղթանակէն վերջ (այն խումբին՝ որ շահած էր եղանակի տանգլիական բաժակը), բնաւ չէինք սպասեր մեր խումբի այս պարտութեան՝ բախղատաբար աւելի տկար խումբէ մը:

Առաջին կիսախաղը անցաւ ապարդիւն: Երկրորդ կիսախաղին էր որ Անգլիացիք յաջորդաբար նշանակեցին հինգ կռիւք, որոնց մերիները պատասխանեցին միակ կռիով մը: Անգլիացւոց այս յաջողութեան առիթ տուող պատճառներէն մին ալ մեր խումբի յետսպահաներուն պէտք եղածէն աւելի առաջացումն էր: Երբ հակառակորդ խումբը յետուած է արագավազ յառաջապահներով, Նէրելի չէ բնաւ յետսպահաներու այդքան առաջացումը, երբ մանաւանդ ամուր վտանգութիւն ալ չունին անոնք բերդապահին վրայ:

Մարտ 13 ին մեր խումբը մրցեցաւ ընդդէմ պահակագորաց M. P. խումբին: Հակառակ անոր որ կը բացակայէին չորս խաղացողներ՝ Հ.Մ.Բ.Մ.ը բաւական յաջող խաղարկութիւն մը ունեցաւ այն օրը: Առաջին կիսախաղին կողմերը հաւասար մնացին (1-1): Ետը վերջացաւ Հ.Մ.Բ.Մ ի յաղթութեամբ (3-1):

Նման յաղթութիւններ սակայն չեն կրնար արգելել մեզ՝ յայտնելու մեր դժգոհանքը Հ.Մ.Բ.Մ ի խումբին յառաջդիմութեան դանդաղկոտութեան նկատմամբ: Նախորդ ամիսներուն ան

ունեցած էր շատ աւելի յաջող խաղարկութիւններ եւ արդարօրէն արժանացած ժողովրդային լայն զանգուածներու հետաքրքրութեան:

Միանգամ ընդ միշտ պէտք է դարբին յաճախակի կատարուող առանձնակի խաղարկութիւնները, որոնք մեծ նպաստ մը չեն կրնար բերել խաղին, եւ զարկ տրուի հաւաքական խաղարկութեան աւելի լայն չափերով կիրարկումին:

ԴԻՏԱԿ

Պ Ա Ս Կ Է Թ Պ Ո Ղ

Հ.Մ.Բ.Մ. ի Պասկէթպուլի խումբը իր առաջին մրցումը կատարեց անցեալ Ուրբաթ (11 Մարտ) Երեկոյան ժամը 7ին ընդդէմ Y.M.C.A.ի, վերջնոյս խաղազայրին վրայ:

Խաղի առաջին վայրկեաններուն մեր տղաքը այնպիսի յարձակումներ գործեցին, որոնք պահ մը անակնկալի բերին եւ շուարումի մատնեցին իրենց զօրաւոր մրցորդը: Հակառակորդէն նշանակուած ամեն մէկ կէտին կը պատասխանէին փոխադարձումով: Խաղի երկրորդ դադարին՝ Հ.Մ.Բ.Մ ի կողմն էր կէտերու առաւելութիւնը (13-11):

Երրորդ շրջանին Y. M. C. A. ի խումբը դաշտ կ'իջնէր կիսովին նորոգուած ոյժերով: Ասկէ վերջ է որ յաճախակի դարձան Y.M.C.A. ի յաջողութիւնները ու խաղը վերջացաւ իրենց յաղթութեամբ (34-19):

Մեր խումբի ձեւք բերած այս արդիւնքը շատ գոհացուցիչ է արդարեւ երբ նկատի առնենք թէ ան իրեն մրցորդ ունէր խումբ մը՝ որ աւելի քան 15 տարիներէ ի վեր կը պահէ Պաղեստինի ախոյեանութիւնը:

ԴԻՏԱԿ

